

# ՀՅԴ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 1922 Թ. ՆԱՄԱԿՆԵՐԸ

ՀՅԴ Արտասահմանի Պատասխանատու մարմնին\*

**Բանալի բառեր** – Վրաստան, ՀՅԴ, Թիֆլիս, Խորհուրդների համագումար, Պատասխանատու մարմին, գրագրություն, մենշևիկյան կուսակցություն, կենտրոնական կոմիտե, նոր տնտեսական քաղաքականություն:

«Վէմ»-ի 2021 թվականի առաջին համարում ընթերցողին էինք ներկայացրել ՀՅԴ Վրաստանի կենտրոնական կոմիտեի 1921 թ. նամակները ՀՅԴ Արտասահմանի Պատասխանատու մարմնին, իսկ սույնով հրատարակում ենք 1922 թվականի նամակները, որոնց բնօրինակները նույնպես պահվում են ՀՅԴ կենտրոնական արխիվում (ԱՄՆ, Մասաչուսեթս, Ուոթերթաուն):

1922 թ. Խորհրդային Վրաստանում ՀՅԴ ընդհատակյա գործունեության շարժառիթներն ու պայմանները չէին փոխվել: Խորհրդային իշխանության հնարավոր փլուզման և Անդրկովկասում անիշխանություն տիրելու հեռանկարը ստիպում էր ՀՅ Դաշնակցությանը պահպանել իր կազմակերպական ներկայությունը Խորհրդային Հայաստանում և հարևան հանրապետություններում: Բայց բուլշևիկյան հավաճանքները պարտադրում էին գործել ընդհատակում և խիստ գաղտնիության պայմաններում:

Ստորև ներկայացվող նամակները հետաքրքիր տեղեկություններ են պարունակում ոչ միայն 1922 թ. Խորհրդային Վրաստանում ՀՅԴ ծավալած գործունեության, այլև այդ հանրապետությունում ու ամբողջ Անդրկովկասում տիրող քաղաքական կացության և սոցիալ-տնտեսական կյանքում կատարվող տեղաշարժերի վերաբերյալ: Տարածաշրջանային մարտահրավերներին անդրադառնալիս խոսվում է ռուս-թուրքական հարաբերությունների լարվածության որոշակի թուլացման մասին: Ուստի եթե նախորդ՝ 2021 թվականի համարում լույս տեսած նամակներում հավանական էր համարվում անգամ ռուս-թուրքական պատերազմը, ապա 1922 թ. հենց սկզբից խոսվում էր փոխադարձ վստահությունը վերականգնելու փորձերի մասին:

Նամակներում մեծ ուշադրություն է դարձվում ամբողջ Անդրկովկասում և հատկապես Վրաստանում իրականացվող Նոր տնտեսական քաղաքականությանը, վեր են հանվում դրա բացասական կողմերը՝ պարենային ապրանքների թանկացումը և ընդհանրապես սոցիալ-տնտեսական

\* Ընդունվել է տպագրության 27.05.2021:

ծանր դրությունը: Դրանց գումարվում էին կարգուկանոնի բացակայությունը, անիշխանությունը, գողությունների և ավազակությունների սովորական դառնալը և այլն:

Մի քանի նամակներում խոսվում է Դրոյի՝ Վրաստան այցելելու, Հայաստան նրա մուտքը արգելելու և նրա ունեցած դրամական որոշ խնդիրների մասին:

Բավական հետաքրքիր է Վրաստանում Խորհրդային Ռուսաստանի զորքերի ներկայության դեմ ուղղված ցույցերի ու ընդվզումների նկարագրությունը, որոնք ձնշվեցին միայն բռնի ուժի գործադրմամբ:

Նամակներում կրկին խոսք կա բանտարկյալ և աքսորյալ դաշնակցականների ճակատագրի, նրանց և նրանց ընտանիքների կարիքները հոգալու մասին: Առանձին զեկուցագրով ներկայացվում է կուսակցության կազմակերպական կյանքի վերակտիվացումը:

Եվ կրկին, ինչպես նախորդ դեպքում, նամակների խորհրդապահական բնույթի պատճառով հաճախ դժվարացել ենք դրանցում հիշատակված որոշ անձանց ինքնությունը պարզել: Որոշ դեպքերում էլ իրենք՝ վկայաբերվող անձինք, մեծ կարևորություն չեն ներկայացրել, ուստի և նրանց մասին պարզաբանում չի տրվել:

**Խաչատուր Ռ. Ստեփանյան**

*Պարմ. գիյ. դոկտոր*

## ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

### N 1

Սիրելիք,

Վաղուց է, որ ձեզանից տեղեկություն չունենք, այդ հանգամանքը մեզ խիստ անհանգստացնում է, որովհետև քաղաքական իրերի ընթացքը այստեղ բաւական անորոշ է, իսկ մենք կտրուած ենք արտաքին աշխարհից: Երկար նամակ գրելու հնարավորություն չունեն, որովհետև գրաբերս իր գնալու մասին յայտնեց վերջին րոպէին:

Հետեւեալ նամակով մանրամասն կը գրեն այստեղի անցողարձի մասին: Ընդհանուր առմամբ խաղաղ է ու սովորական: Ներքին քաղաքականութեան մէջ նոր տնտեսական քաղաքականութիւնը<sup>1</sup> տուեց իր հետեւանք-

<sup>1</sup> Ուզմական կոմունիզմի քաղաքականության ծախողումից հետո Խորհրդային Ռուսաստանում, ապա նաև մյուս խորհրդային հանրապետություններում Վ. Լենինի առաջարկությամբ կիրառության մեջ դրվեց Նոր տնտեսական քաղաքականությունը (նէպ - ռուսերեն՝ новая экономическая политика): Նէպը ենթադրում էր նահանջ դեպի կապիտալիզմ պետական վերահսկողության ներքո: Ծրագրվում էր ապրանքարամական-շուկայական հարաբերու-

ները՝ տնտեսական կեանքը եւ նրանից կապւած արտաքին պարագաները հին կեանքի տպաւորութիւն են թողնում, սակայն ներքուստ մեծամասնական քաղաքականութիւնը իր բոլոր կողմերով շարունակում է հին թափով, բայց՝ լքած ու տատանւած: Սրանից մի քանի շաբաթ առաջ ռուս-տաճկական պատերազմը համարում էր անխուսափելի, բայց այժմ այդ միանգամայն ժխտում է շնորհիւ Մուստաֆա Քեմալի արած յայտարարութեան ՌՍՖՍՌ ներկայացուցիչ Ֆրունզեին<sup>2</sup>, թէ իրանք միայն Ռուսաստանին են համարում իրենց անկեղծ բարեկամն ու գտնում են, որ սահմանների խնդիրը պէտք է վերաքննել, ուստի պատրաստ են անել զիջումներ: Զօրքերի կուտակում կամ կենտրոնացում չի նկատում:

Եկել է Թիֆլիս Դրօն, որին թոյլ են տւել միայն 30 օրով գալ Վրաստան ընտանիքին տեսնելու համար, առանց Հայաստան գնալու իրաւունքի<sup>3</sup>: Մինչեւ փետրւար 20-ը մնալու է տեղա: Նա խնդրեց ձեզ գրել, որ ձեզանից նա ստացել է մի անգամ 5 թէ 6 հազար Նիկոլ[այի] դրամ<sup>4</sup> և յետոյ 100 ֆ[ունտ] ստերլինգ: Նկատի ունենալով, որ կարող են տեղի ունենալ դէպքեր կամ պատահարներ, նա խնդրում է իրան մեր միջոցով իբրեւ ֆոնդ տեղափոխել նորից 100 ֆ[ունտ] ստերլինգ: Ինքը չի գրում նամակ, որովհետև իր գրածներին դուք բնաւ չէք պատասխանում:

Մեր բոլոր բանտարկեալներին արդեն ազատել են՝ բացի երկուսից՝ Աղաբեկից (որի մոտ գտել են ատրճանակ եւ դատապարտել 3 ամիս) եւ տրամալի ծառայող Բադալ Յարութիւնեանից: Աքսորւած ընկերներին արդեն աջողւել է նոյնպէս ազատուել: Այս գործի վրայ մենք ծախսել ենք 40 միլիօն, Դրօն էլ իր կողմից՝ 7 միլիօն: Նրանցից մի մասը մեկնում է Մոսկւայ, իսկ մեզ կարեւոր ընկերները գալու են Թիֆլիս: Մենք նրանց պահելու ենք կոնսպիրատիւ<sup>5</sup> կերպով:

Թամոյեանը մօտ օրերս գալու է Պօլիս: Ռօստովում բժաւոր տիֆից վախճանւեց մեր ընկեր Արտուշ Քոչարյանը: Նա մեզ շատ աջակցութիւն էր ցոյց տալիս վերջին տարւայ ընթացքում եւ վարում էր ամենաակտիւ աշխատանքներ: Համաձարակ հիւանդութիւնները, տիֆ, նազիկ, մալարիա, տիֆտերիա, սովամահութիւն չտեսնւած չափերով տարածւած են թէ՛ Ռուսաստանում, թէ՛ մեզանում: 1918 թւականը կարծէս թէ կրկնւում է:

թումների աշխուժացում, որի շնորհիվ հնարավոր կլիներ վերականգնել տնտեսությունը: Նէպի միջոցառումների շարքում կենտրոնականը պարենային հարկն էր:

<sup>2</sup> Միխայիլ Ֆրունզե (1885-1925) - խորհրդային պետական և ռազմական գործիչ: 1920 թ. սեպտեմբերից խորհրդային Ռուսաստանի Հարավային ռազմաճակատի հրամանատար: 1920 թ. դեկտեմբեր - 1922 թ. փետրվարին խորհրդային Ռկրահայի ռազմական գործերի ժողովրդական կոմիսար: 1921 թ. նոյեմբերին ղեկավարել է խորհրդային Ռուսաստանի արտակարգ դեսպանությունը Անկարայում և բանակցություններ է վարել Մ. Քեմալի հետ:

<sup>3</sup> Դրոն խորհրդային Հայաստանից Մոսկվա էր քստրվել 1921 թ. հունվարին: 1921 թ. Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո նրա ընտանիքը Երևանից տեղափոխվել էր Թիֆլիս:

<sup>4</sup> Նկատի ունի Ռուսական կայսրության մետաղադրամները:

<sup>5</sup> Քողարկված (ռուսերեն):

Գեներալի կոնֆերանսի<sup>6</sup> համար ընտրած են նախագահ Լենին և նրան լիազօր փոխարինող Չիչերին<sup>7</sup>, Հայաստանի՝ Բեկզադեան<sup>8</sup> (վերջինիս դեմ մեծ օպոզիցիա<sup>9</sup> կայ), Վրաստանի՝ Բ. Մոխիանի, իսկ Ատրպեջանի՝ Նարիմանով: Եթէ այս հանրապետությունները չըձանաչուին իբրև անկախ պետություններ, այն ժամանակ նրանք ռուսական դեկեզացիայի<sup>10</sup> մէջ կմասնակցեն:

Վերջին անգամ մենք ձեզանից ստացանք 1000 լիրայ նոյեմբեր և դեկտեմբերի համար: Մեր դրամները վերջացած լինելու պատճառով մենք ստիպված եղանք Ղ-ից պարտք վերցնել 1000 լիրայ: Խնդրում ենք այս գումարից 500 լիրան մտցնել Գալձեանի հասցեով, իսկ 500 լիրան դրամով յանձնել նրան, դրամով մեզ վճարելու համար: Դրամի եւ չէկի մէջ այժմ մեծ տարբերություն կայ: Միւս անգամ աւելի մանրամասն նամակ կը գրեմ: Առ այժմ այսքան:

Ընկերական բարեւներով

Սուրէն

1/II, 1922 թ.

Մեծ Քաղաք

ՀՅԴ արխիւ, Մաս Ե., թղթածրար թիւ 262ա, փաստաթուղթ թիւ 4  
(4 էջ): Բնագիր: Ձեռագիր:

## ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

N 2

Սիրելիք,

Առանձին քաղաքական նորություն ձեզ հաղորդել այս նամակով չեմ կարող: Քաղաքական կեանքը անշարժ վիճակումն է գտնուում: Մակայն նոր տնտեսական քաղաքականությունը իր կործանարար հետեւանքներն է ցուցադրում: Մի չտեսնուած թանկություն է տիրում, եւ սովետական դրամը ոչ թէ օրը օրին, այլ ժամ առ ժամ ընկնում է: Մանաւանդ այս վերջին երկու օրս ոսկու գինը հասել է 5 միլիոն 750 հարզը, նմանապէս եւ վալիւտան<sup>11</sup>: Իսկ կեանքի պայմանները ըստ այդմ բարդացել են, սեւ հացը արժէ 50-60 հազար, շաքարը՝ 120 հազար: Ամենաէժան բանը լոբին է՝ 25-30 հազար:

<sup>6</sup> **Ջենովայի** տնտեսական և ֆինանսական հարցերով միջազգային կոնֆերանսը տեղի է ունեցել ապրիլի 10-ից մայիսի 19-ը Իտալիայի Ջենովա քաղաքում: Մասնակից 29 պետությունների շարքում եղել են նաև Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչները: Ղա շատ կարևոր էր Խորհրդային Ռուսաստանի համար, որովհետև այն դեռ միջազգայնորեն ճանաչված պետություն չէր: Պատվիրակության պաշտոնական նախագահը Վ. Լենինն էր, բայց նա չմեկնեց, և նրան փոխարինեց արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Գ. Չիչերինը: Պատվիրակության կազմում էին նաև Անդրկովկասյան խորհրդային հանրապետությունների ներկայացուցիչներ Ալեքսանդր Բեկզադեանը, Բուդու Մոխիանին և Նարիման Նարիմանովը: Կոնֆերանսում քննարկվեց արևմտյան կապիտալիստական երկրների և Խորհրդային Ռուսաստանի միջև տնտեսական հարաբերությունների հարցը: Խորհրդային Ռուսաստանը հայտարարեց, որ պատրաստ է մարելու արևմտյան երկրներին ցարական Ռուսաստանի ունեցած պարտքերը՝ իրեն դե յուրե ճանաչելու դիմաց:

<sup>7</sup> **Գեորգի Չիչերին** (1872-1936) - խորհրդային դիվանագետ: 1918-1922 թթ. եղել է Խորհրդային Ռուսաստանի, 1923-1930 թթ. ԽՍՀՄ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարը:

<sup>8</sup> Խոսքը Ալեքսանդր Բեկզադեանի մասին է:

<sup>9</sup> Ընդդիմություն (ռուսերեն):

<sup>10</sup> Պատվիրակություն (ռուսերեն):

<sup>11</sup> Տարադրամ (ռուսերեն):

Սովոր եւ համաձայնակը ընդունել են չտեսնած չափեր: Իսկ միւս կողմից կեանքի վակխանալիան<sup>12</sup>, անբարոյականութիւնը, սանձարձակ աւագակաբարո կենցաղը հասել են նոյնպէս իրենց գագաթնակէտին: Ռուսաստանի զանազան քաղաքներն արդեն ապրում են այդ շրջանը: Այսպէս, Ռոստովում ոչ ոք չի կարող երեկոյեան ժամը 5-ից յետոյ դուրս գալ առանց թալանելու: Քաղաքում կայցրած են պակասներ. «Власть до восьми часов – ваша, после восьми – наша»<sup>13</sup>: Իշխանութիւնը անգոր է այս երեկոյթի առաջն առնելու: Արդեն Բագուն ապրում է նոյն վիճակը: Կառավարութիւնը Բագվում ազգաբնակչութեանը առաջարկել է ժամը 8-ից յետոյ դուրս չգալ փողոց, մինչեւ որ միջոցներ ձեռնարկի բանդիտիզմի դէմն առնելու համար: Թիֆլիսն էլ օրը օրին նոյն պերսպեկտիվին<sup>14</sup> է սպասում: Դժգոհութիւնը, հայիոյանքը ազգաբնակչութեան մէջ անպակաս են, միայն չէկայի վախը կանգնեցնում է ակտիւ քայլերից:

Գենուայի կոնֆերանսին, ինչպէս անցեալ անգամ գրել էի, Հայաստանի կողմից նշանակած է Բէկզադեանը: Սակայն հայկական ղեկավար շրջանակները դեմ են նրան եւ առաջ են քաշում Լուկաշինին<sup>15</sup>: Հաւանական է, որ վերջինս կը գնայ:

Յունարի վերջին թերին Երեւանում կայացաւ Հայաստանի խորհուրդների համագումար, ուր եւ ընտրուեցաւ նոր կառավարութիւն<sup>16</sup>: Նախագահ՝ Միասնիկեան, քարտուղար՝ Տեր-Սիմոնեան<sup>17</sup>, Միասնիկեան՝ զինուորական, Ալիս՝ ներքին, Լուկաշին՝ ժողովրդական տնտեսութեան, Իւանեան՝ պարենաւորման, Տէր-Սիմոնեան՝ ընկերային ապահովութեան, Շահերդեան<sup>18</sup> իրավաբանութեան, Մարգարեան՝ փոստի, Խանջեան<sup>19</sup> աշխատանքի, Լա-

<sup>12</sup> Վակխանալիա (լատ.՝ bacchanalia) - հին հունական Վակխա (Դիոնիսիոս) աստծուն նվիրված միստիկական և օրգիական տոնակատարություն: Օգտագործված է փոխաբերական **զանգվածային անկարգություն** և **անկազմակերպվածություն** իմաստով:

<sup>13</sup> «Իշխանությունը մինչև ժամը ութը ձերն է, ութից հետո՝ մերը» (ռուսերեն):

<sup>14</sup> Հեռանկար (ռուսերեն):

<sup>15</sup> **Սարգիս Լուկաշին (Մրապիոնյան)**, 1885-1937) - խորհրդահայ կուսակցական և պետական գործիչ: 1922-1925 թթ. եղել է Խորհրդային Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահը:

<sup>16</sup> Հայաստանի ՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարը տեղի է ունեցել 1922 թ. հունվարի 30-ից փետրվարի 4-ը Երևանում: Ի թիվս այլ հարցերի խորհուրդների առաջին համագումարը ընտրեց Խորհրդային Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդ, քննարկեց և ընդունեց <ՍԽՀ առաջին սահմանադրությունը:

<sup>17</sup> **Դրաստամատ Տեր-Սիմոնյան** (1895-1937) - խորհրդահայ կուսակցական պետական գործիչ, գրող, հրապարակախոս: 1921 թ. եղել է Խորհրդային Հայաստանի խնամատարության (սոցիալական ապահովության) ժողովրդական կոմիսար, ապա Ջանգեզուրի արտակարգ կոմիսար: 1922-1925 թթ. Խորհրդային Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի քարտուղար: 1928 թ. Փարիզի կոմունիստական «Երևան» թերթի խմբագիր: Վերադարձել է Հայաստան և դարձել Հայաստանի գործերի միության առաջին նախագահ, «Նոր ուղի» հանդեսի խմբագիր, Երթալխորհրդի նախագահ և այլն: 1932 թ. նշանակվել է «Հայկական խորհրդային հանրագիտարանի» գլխավոր խմբագիր: 1936 թ. հեռացվել է կոմունիստական կուսակցության շարքերից: Ջոն է դարձել ստալինյան բռնությունների:

<sup>18</sup> Խոսքը Դանուշ Շահերդյանի մասին է:

<sup>19</sup> **Աղասի Խանջյան** (1901-1936) - խորհրդահայ կուսակցական և պետական գործիչ: 1922 թ. մի կարճ շրջան եղել է Խորհրդային Հայաստանի աշխատանքի ժողովրդական կոմիսարը, ապա գործուղվել է Լենինգրադ (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ): 1928 թ. ՀամԿ(Բ)Կ Կենտկոմի որոշմամբ վերադարձել է Հայաստան, նշանակվել է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի երկրորդ, իսկ 1930 թ. առաջին քարտուղար: Կոմունիստական պաշտոնական վարկածով ինքնասպան է եղել 1936 թ.: Գոյություն ունի նաև այն վարկածը, ըստ որի՝ Թիֆլիսի իր աշխատասեյակում Ա. Խանջյանին սպանել է ՀամԿ(Բ)Կ Անդրկովկասի երկրամասային կոմիտեի առաջին քարտուղար Լ. Բերիան:

զարեւ՝ առողջապահութեան, Մակինցեան<sup>20</sup> նարկոմարտ<sup>21</sup>, Գինկին՝ ֆինանսների, Ամիրխանեան<sup>22</sup> չէկայի նախագահ:

Փետրւարի 5-ին Երեւանում կայացաւ հայ գրողների համագումար: Յ. Թումանեանը Թիֆլիսումն է եւ հիւանդ: Յայտնի չէ հիվանդութեան աստառը՝ բժշկական է, թէ դիպլոմատիկ<sup>23</sup>:

Ֆեդերացիայի խնդիրը<sup>24</sup>, չնայած որոշումի, դեռ դանդաղում է: Վրացիներն ու թաթարները ամեն տեսակի խոչընդոտներ են ստեղծում: Կովկասեան բանակի հրամանատար Գիկերը հեռացել է, նրան փոխարինել է Եգորովը, որը համարում է տաճկաֆիլ:

Նոր ձերբակալութիւններ չկան: Բանտարկւած ընկերները չեն արձակւած դեռ: Պետրովսկից արդեն մի քանի ընկերներ վերադարձել են: Միւսներն էլ մօտ օրերս կգան: Նրանց նորից տեղափոխեցինք:

Դրօն ամսի 19-ին մեկնում է Մոսկւայ: Խնդրում է իր առաջադրած խնդիրը լուծել: Առաջարկում է իր հետ կապը պահպանել կամ մեր միջոցով, կամ տալ Եւրոպայի մի քանի չէզոք հասցեներ: Բեռլինի ձեր տւած հասցեն գտնում է վտանգաւոր:

Ուրիշ նորութիւններ չունինք: Խնդրում ենք մեզ ինֆորմացիա<sup>25</sup> տալ:

Ընկերական բարեւներով՝ Սուրէն  
8/II, 1922 թ.

ԼՅԴ արխիւ, Մաս Ե., թղթածրար թիւ 262ա, փաստաթուղթ թիւ 5 (4 էջ):  
Բնագիր: Ձեռագիր:

<sup>20</sup> Խոսքը **Պողոս Մակինցեանի մասին է:**

<sup>21</sup> Լուսավորության ժողովրդական կոմիսար (ռուսերեն):

<sup>22</sup> **Շավարշ Ամիրխանյան** (1894-1959) - խորհրդահայ կուսակցական և պետական գործիչ: 1921-1926 թթ. եղել է Խորհրդային Հայաստանի արտակարգ հանձնաժողովի (չէկա) նախագահը:

<sup>23</sup> Նկատի ունի այն, որ Հովի. Թումանյանի Երևան չգալու և գրողների միության համագումարին չմասնակցելու պատճառը կարող էր նրա հիվանդությունը չլինել: Հովի. Թումանյանը, որ համաձայն չէր Խորհրդային Հայաստանում կատարվող մի շարք երևույթների, թեև չէր բարձրաձայնում այդ մասին, սակայն այսկերպ արտահայտում էր իր անհամաձայնությունը:

<sup>24</sup> Նկատի ունի Անդրկովկասյան դաշնությունը:

<sup>25</sup> Տեղեկություն (ռուսերեն):

## ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

N 3

Սիրելիք,

Ձեր փետրուար 8-ին գրած նամակը ստացանք: Մեր վերջին նամակից մինչև այսօր առանձին քաղաքական նորութիւն չկայ:

**Անդրկովկասեան մասշտաբով** կատարում է կոմունիստական կուսակցութեան համագումարը, որի գլխաւոր որոշումն է անյապաղ կիրառել կեանքի մէջ ֆեդերացիան: Հաւանական է, որ այն մօտ ապագայում արդէն իրագործուի: Ֆեդերացիայի նախագահ նշմարում է Նարիմանովը իբրեւ թաթար: Կատարեց կոմունիստական կուսակցութեան կովկասեան բիւրօի ընտրութիւնը հետեւեալ կազմով՝ Օրժոնիկիձէ, Օրախելաշվիլի<sup>26</sup>, Միասնիկեան, Լուկաշին, Կիրով<sup>27</sup>, Լիսովսկի, Եաղուբեան, Նարիմանով, Կարաւել: Քարտուղար, որը նախագահի իրաւասութիւն ունի, նշանակել է Օրախելաշվիլին: Համագումարն ընդհանուր առմամբ անցաւ բաւականին թոյլ, առանձին կարեւոր իւրայատուկ որոշումներ չկայացան: Հայաստանի ներկայացուցիչները այս անգամ աւելի լաւ են, քան թէ նախկին կազմը: Այժմ Վրաստանի խորհուրդների համագումարն է կայանում: Նիստերը շարունակում են: Ընտրւելու է Վրաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը, որը եւ կառավարութիւնն է լինելու: Բացի ֆեդերացիայից՝ ուրիշ հերթական հրատապ խնդիր չկայ: Տաճկական սահմանում միանգամայն հանգիստ է, պատերազմի հարցը ժամանակաւորապէս վերացւած է համարում: Անգամ նկատում է երկու ոյժերի՝ Տաճկաստանի և Ռուսաստանի մերձեցում: Կովկասեան զինուորական բարձրագոյն մարմինը մի զեկուցում է գրել Մոսկվայ, ուր այն միտքն է արծարծում, որ Անդրկովկասեան երեք ժողովուրդների մէջ միակ վստահելին հանդիսանում է հայ տարրը, որի վրա առաջարկում է յենուել արտաքին քաղաքական հարցերի վերաբերմամբ:

**Վրաստանում** Գենուայի կոնֆերանսի հետ կապւած, համաձայն արտասահմանից ստացւած հրահանգի, տեղի ունեցան համարեայ ամենուրեք մի շարք դեմոնստրացիաներ<sup>28</sup>, գլխաւորապէս երիտասարդութեան՝ ուսանողութեան եւ աշակերտութեան մէջ: Պահանջում էին ռուսական օկուպացիօն բանակի հեռացումն: Թիֆլիսի համալսարանը մի քանի օրով, ինչպէս ցարական ռեժիմի ժամանակ, փակուեց, բազմաթիւ ուսանողներ ձերբակալ-

<sup>26</sup> **Իվան Օրախելաշվիլի** (1881-1937) - վրացի կոմունիստ գործիչ: 1921-1925 թթ. եղել է Վրաստանի Հեղկոմի նախագահ, Վրաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար, Վրաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահի տեղակալ, Անդրդաշնութեան ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ:

<sup>27</sup> **Սերգեյ Կիրով** (1886-1934) - խորհրդային կուսակցական և պետական գործիչ: 1920 թ. ապրիլի 28-ին Կարմիր բանակի հետ մտել է Բաքու: 1921-1926 թթ. եղել է Ադրբեջանի Կ(Բ)Կ Կենտկոմի քարտուղար: Անդրդաշնութեան հիմնադիրներից էր:

<sup>28</sup> Տոյցեր (ռուսերեն):

ւեցին: Մենշելիկներից այժմ ձերբակալւած են մի քանի հազար մարդ: Ձերբակալութիւնները մեզ վրայ չտարածւեցին, բացի Ախալցխայից, որ մերոնցից բռնւեցին մօտ 12 ընկեր, սակայն մի տասը օրից յետոյ նրանց ազատ արձակեցին: Մեզ առ այժմ թողել են հանգիստ: Նափտալուղում<sup>29</sup> կանգնած զօրքերի մէջ նոյնպէս տէղի ունեցան խլրտումներ՝ պահանջում էին իրենց տուն ուղարկել: Կատարւեցին բազմաթիւ ձերբակալութիւններ եւ մի քանի գնդակահարութիւններ: Վերջին ժամանակներս սարսափելի տնտեսական տագնապ է բերում ամբողջ Անդրկովկասում եւ մասնաւորապէս Վրաստանում: Բացի հացից, որի ֆունտը արժէ 20 հազար, միւս մթերքների գները խիստ բարձրացել են: Մինչդեռ վալիտան ընկել է, շնորհիւ նրան, որ վրացական փողի եւ ռուսական սովետականի միջեւ հսկայական լաժ<sup>30</sup> կայ: Վրացական մի միլիոնը արժէ սովետական չորս միլիոն, իսկ ադրբեջանական՝ հինգ միլիոն: Չնայած նոր տնտեսական քաղաքականութեանը, բոլոր առեւտուրը կանգնել է, աղքատութիւնը հասել է մինչեւ այժմ չտեսնուած չափերի:

**Ադրբեջանում** նոյնպէս հանգիստ է, առանձին դէպքեր տէղի չեն ունենում: Նկատուում է տաճկական էմիսարների տենդային աշխատանք: Զէնքի գնումները մեծ չափերի են հասել: Ռուսական կոնտրիսուզարկու մարմինը այս արդէն նկատել է և որոշ միջոցներ ձեռք առել: Ընդհանրապէս Մոսկւան պանիսլամական շարժումով շատ է սկսել հետաքրքրւել, անգամ ուղարկւած է Թիֆլիս յատուկ լիազոր՝ ոմն Սակալսկի, ուսումնասիրելու եւ պարզելու այդ շարժման էութիւնը:

**Հայաստանում** կեանքը բոլորովին հանգիստ է: Մասսաները<sup>31</sup> վերին աստիճանի դժգոհ վիճակի մէջ են, բայց բռնկումներ տէղի չեն ունենում: Մեծամասնականները շատ գոհ են Հայաստանից և համարում են իրենց դիրքերը շատ ամուր: Օրժոնիկիձէն առանձին գոհունակութեամբ համագումարում ընդգծեց, որ Հայաստանը միակ երկիրն է, ուր խորհրդային շինարարութիւնը բաւարար հետեւանքներ է տւել: Միասնիկեանին էլ այդ իսկ պատճառով իրենք համարում են հայկական երկրորդ Լենին: Չնայած դրան, երկրի քայքայումը, սովը, անիշխանական վիճակը հասել է իր ծայր վիճակին: Նէրքին գործոց կոմիսար նշանակւած է Աւիսի փոխարէն Կոստանեանը<sup>32</sup>, Ներսիսեան աւարտ<sup>33</sup> մի աշակերտ, որին համարում են Աւիսի նման մի անձ՝ պատկանող կուսակցական ձախ թելին:

<sup>29</sup> Թաղամաս Թիֆլիսում:

<sup>30</sup> **Լազ** - ժամանակային և արժեքային խզվածություն (տնտեսագ.):

<sup>31</sup> Ժողովրդական զանգվածները:

<sup>32</sup> **Արամ Կոստանյան** (1894-1937) - խորհրդայն կուսակցական և պետական գործիչ: 1922 թ. եղել է խորհրդային Հայաստանի ներքին գործերի ժողովրդական կոմիսարի տեղակալ և ժամանակավորապէս փոխարինել է Ավիս Նուրիջանյանին:

<sup>33</sup> Այսինքն՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի շրջանավարտ:



**Կուսակցական**<sup>34</sup> **կեանքը** շարունակում է իր ընթացքով: Աջողւեց նաեւ Բագում ստեղծել մի մարմին, որի միջոցով հնարաւոր կլինի կապել նաեւ Անդրկասպեան երկրների հետ, ուր հայ մասսաների մէջ, ըստ եկող ընկերների, կուսակցական տրամադրութիւն կայ: Պետրովսկից առանձին նորութիւն չկայ: Շնորհիւ իրենց անզգոյշ քայլերի չ'աջողւեց փետրարի ընթացքում ազատել: Ստիպւած եղանք գործը նորից սկսել, յոյս կայ աջող լուծման: Մի քանիսը մնացածներից փախել են եւ եկել են տէղս: Հայաստանում բանտարկութիւններ չկան: Նկատում է դէպի դաշնակցականները մեղմ վերաբերմունք:

Բռնել է Պարսկաստանից ուղարկւած մի նամակ, ուր տրում են զանազան հրահանգներ եւ յոյս է ներշնչում մօտ ապագայում հանդիպելու: Ստորագրութիւնը անծանօթ է եւ մեզ համար պարզ չէ, թէ դա իսկութիւն է, թէ պրովոկացիա<sup>35</sup>: Հրահանգւած է ոչ այնտէղից, ոչ այստէղից Պարսկաստանից բաց չըթողնել Պարսկական սահմանից<sup>36</sup>: Պարսկաստանի կուսակցական շարքերից դուրս եկան Աւետիս Օհանջանեանի<sup>37</sup>, Առաքելի, Սիրակ Գրիգորեանի<sup>38</sup>, Գերասիմ Բալայեանի<sup>39</sup>, Վարշամեանի<sup>40</sup> ղեկավարութեամբ մի խումբ, որն իրեն յայտարարեց աշխատատրական թեւ եւ կապեց Երեւանի մեծամասնականների հետ: Նրանք հրատարակեցին մի դէկլարացիա<sup>41</sup>, որը կողարկենք հետեւեալ անգամ: Ռուբէնը<sup>42</sup> արդեն մեկնել է Թաւրիզից, մնացել է Կարօ Սասունին<sup>43</sup>:

**Պարսկաստանում** տէղի են ունեցել հետեւեալ դէպքերը: Ատրպատականի պարսիկ դեմոկրատները, որոնք մեծամասնական դրամներով եւ աջակցութեամբ էին աշխատում, փորձեցին Թաւրիզում յեղաշրջում կատարել և կցել Ատրպատականը Ադրբեջանին: Ռուսական զօրքն էլ պատրաստում էր, ինչպէս միշտ, ներխուժել սահմանը: Սակայն նրանց չի աջողւել: Դեմոկրատները պարտուել են եւ փախել: Սմկօն իրեն յայտարարել է Քրտստանի պետ եւ կապելով մեծամասնականների հետ եւ միւս կողմից

<sup>34</sup> Նկատի ունի ՀՅԴ կուսակցական կյանքը:

<sup>35</sup> Սադրանք (ռուսերեն):

<sup>36</sup> Զակերպումն անհաջող է ստացվել: Նկատի ունի խորհրդա-իրանական սահմանի վրա հաստատված խիստ հսկողությունը:

<sup>37</sup> **Աւետիս Օհանջանյան** - եղել է Հայաստանի Հանրապետության երկրորդ խորհրդարանի (1919-1920 թթ.) պատգամավոր:

<sup>38</sup> **Սիրակ Գրիգորյան**- եղել է Հայաստանի Հանրապետության երկրորդ խորհրդարանի (1919-1920 թթ.) պատգամավոր:

<sup>39</sup> **Գերասիմ Բալայան** - եղել է Հայաստանի Հանրապետության երկրորդ խորհրդարանի (1919-1920 թթ.) պատգամավոր:

<sup>40</sup> Խոսքը **Ղևորգ Վարշամյանի** մասին է:

<sup>41</sup> Հռչակագիր (ռուսերեն):

<sup>42</sup> Խոսքը Ռուբեն (Մինաս) Տեր-Մինասյանի մասին է:

<sup>43</sup> **Կարո Սասունի** (1888-1977) – ականավոր դաշնակցական գործիչ, պատմաբան: Ծնվել է Սասունի Աիրոնք գյուղում: Մամիկոնյանների իշխանական տոհմից սերված Ղազարի և հերոսուհի Աննայի (Աննա Մայրիկ) ընտանիքում: Եղել է Հայաստանի Հանրապետության երկրորդ խորհրդարանի (1919-1920 թթ.) պատգամավոր: 1920 թ. եղել է Ալեքսանդրապոլի նահանգապետ: Մասնակցել է 1921 թ. Փետրվարյան ապստամբությանը, եղել է Հայրենիքի փրկության կոմիտեի անդամ: Տարագրության մեջ գրել է մի շարք արժեքավոր պատմագիտական աշխատություններ:

էլ անգլիացիների հետ, երկուսից էլ դրամ ստանալով, ուզում էր ստեղծել ազատ Քիւրտիստան: Վերջին տեղեկութիւններով նա սպանւած է: Կուռօյի<sup>44</sup> մահը սուտ է:

**Դրամական** – դեկտեմբեր ամսւայ համար մենք ձեզնից ստացել ենք հազար լիրա: Հազար լիրա էլ ստացել ենք նաեւ յունար ամսւայ համար: Իսկ փետրւարի համար ոչինչ չենք ստացել: Նորից խնդրում ենք ձեզ ուղարկել դրամը լիրայով եւ ոչ թէ փոխադրել (перевод<sup>45</sup>), որովհետեւ պերետորը այստէղ, իբրեւ չեկ, արժէ 10%-15% աւելի ցած քան նաղդ<sup>46</sup> դրամը, ուստի ուղարկեք Денъгинский пакет-ով<sup>47</sup> մեր անունով: Խնդրում ենք տեղափոխել մեզ հասանելիք փետրւարի եւ մարտի երկու հազար լիրան:

Ստորագրություն չկա:  
3/III, 1922 թ.

ՀՅԴ արխիւ, Մաս Ե., թղթածրար թիւ 262ա, փաստաթուղթ թիւ 6 (4 էջ):  
Բնագիր: Ձեռագիր:

## ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

N 4

Հ.Յ. Դաշնակցութեան Պատասխանատու Կենտրոնական մարմնին, Կ. Պոլիս

Համաձայն Թիֆլիսից տրւած մանդատի, որը ոչնչացնում եմ Բաթումի նաւահանգստում խիստ խուզարկութեան պատճառով, ինձ յանձնարարած էին Թիֆլիսի դաշնակցական ընկերները՝ զեկուցանելու ձեզ հետեւեալը:

Հակառակ մեր կուսակցական տեսակէտի, ողջունելու չափ ուրախ ենք Կարմիր բանակի Կովկաս ստնելուն, հետեւեալ պատճառով: Ինչպէս յայտնի է ամենքուդ, վերջին հայ ժողովրդի հիմնովին քայքայման պատճառով նա զրկւած է բոլոր տեսակի ինքնապաշտպանութեան միջոցներից, որովհետեւ մի օր իսկ եթէ Կարմիր բանակը հեռանալու լինի Կովկասի սահմաններից, հայ ժողովուրդը պիտի ենթարկուի ամէնասուկալի հալածանքի, նոյնիսկ բնաջնջման: Այս ամէնը նկատի առնելով մենք որոշած ենք չհեռանալ մեր տէրերէն եւ ամէն ջանք ի գործ դնել՝ կազմակերպելով իւրաքանչիւր հայկական

<sup>44</sup> Կուռօ Թաթայան (1896-1944) - հայ ռազմական գործիչ: Ծնվել է Շուշիում: Հայաստանի Հանրապետության երկրորդ խորհրդարանի (1919-1920 թթ.) պատգամավոր: Եղել է Դրոյի օգնականը, մասնակցել է Բաշ Ապարանի ձակատամարտին, 1918 թ. հայ-վրացական պատերազմին ու Սուրմալուի ձակատամարտին: 1921 թ. Փետրվարյան ապստամբության ժամանակ եղել է հայկական բանակի ընդհանուր հրամանատարը: Մահացել է Բուխարեստում:

<sup>45</sup> Պերևոդ, այս դեպքում՝ դրամական փոխանցում:

<sup>46</sup> Կանխիկ (թուրքերեն):

<sup>47</sup> Դրամական փաթեթ (ռուսերեն):

շրջաններում Դաշնակցական մարմիններ, որին որոշ չափով հասած ենք: Արդեն կազմակերպւած են Երեւանը, Թիֆլիսը, Ալէքսանդրապոլը, Շուշին, վերջերս՝ Գանձակը եւ Բագուն: Կ'աշխատինք կապ հաստատել նաեւ Թաւրիզի ընկերներու հետ: Այս ձեռով մենք մեր կազմակերպչական աշխատանքներ: Հակառակ մեր քաղաքական եւ նիւթական ծանր պայմանների՝ մենք բաւական մեծ աշխատանք ենք կատարած եւ բաւական լայնացած ցուցանիշով վերոյիշեալ տեղերում:

Մեր կազմակերպչական գործը, խուսափելու համար մարմինների հակասութիւններից մեր վերջին համագումարում (Կովկասեան), որոշեցինք ընտրել մի պատասխանատու ընդհանուր մարմին, որը վարելու է Կովկասում ընդհանուր կուսակցական գործը, եւ ձայների մեծամասնութեամբ հիշեալ մարմինը ընտրուեցաւ Վրաստանի Մարմինը: Լինելով ընդհանուր պատասխանատու մարմին՝ այս մարմինը իր կարգադրութիւնները պիտի անէ նաեւ Եւրոպայում գտնուող Դաշնակցական ընկերների վերաբերեալ: Եւ որպէսզի Կովկասում անհրաժեշտ աշխատանքները առաջնորդուին, նրանք կդիմեն ձեզ Եւրոպայի ընկերների խնդրով նիւթական աջակցութիւն ամսական հազար հինգ հարիւր տաճկական թղթէ լիրա: Գալով նրանց մասնակցելուն Եւրոպայի համագումարին, մի քանի պատճառներով դրդուած կ'խուսափին մեկնել: Վստահ չեն, թէ կարող են Կովկասէն ելնել: Մնացեալ պատճառները չեն յիշում:

Ահաւասիկ յիշածներս նրանց ինձ յանձնեցուցած զեկուցումից:

Յար(գ)անքներով՝ Ղարս

8/IX, 1922 թ.

ԸՅԴ արխիւ, Մաս Ե., թղթածրար թիւ 262ա, փաստաթուղթ թիւ 11 (1 էջ):  
Բնագիր: Ձեռագիր:

**Խաչատուր Ռ. Ստեփանյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակում են 19-րդ դ. վերջի – 20-րդ դ. սկզբի հայ ազգային-ազատագրական շարժման, Հայաստանի Հանրապետության (1918-1920 թթ.) և Խորհրդային Հայաստանի պատմության հիմնահարցերը: Ջբաղվել է նաև 1920-1930-ական թվականների սիյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գիտական ուսումնասիրությամբ: Հեղինակ է հինգ մենագրության, մեկ բուհական դասագրքի, շուրջ 80 գիտական և գիտամեթոդական հոդվածների:

Էլ. հասցե – kh.stepanyan@gmail.com

## THE 1922 LETTERS OF THE ARF CENTRAL COMMITTEE OF GEORGIA

To the ARF External Responsible Body

Khachatur R. Stepanyan  
*Doctor of Sciences in History*

**Key words** – Georgia, ARF, Tiflis, Congress of Soviets, Responsible body, correspondence, Menshevik party, Central Committee, new economic policy.

The published documents present several letters of the ARF Central Committee of Georgia in 1922 addressed to the ARF Foreign Responsible Body. In 1922, both the motive and the conditions of the ARF underground activities in Soviet Georgia (as in the whole of the Soviet Transcaucasia), did not change. The prospect of a possible collapse of Soviet power and anarchy in Transcaucasia forced the ARF leadership to maintain its organizational presence in both Soviet Armenia and neighboring republics. At the same time, Soviet persecution forced them to operate underground and in the conditions of strict secrecy.

The letters below contain interesting information not only about the activities of the ARF in Soviet Georgia in 1922, but also about the political and socio-economic situation in that republic and throughout Transcaucasia.

Addressing regional policy issues, the letters alluded to some easing of tensions which emerged in Soviet-Turkish relations in late 1921.

The letters pay great attention to the New Economic Policy implemented in the whole Transcaucasia and especially in Georgia, revealing its negative aspects.

Several letters mention Dro's visit to Georgia, his ban on entry to Armenia, and some of his financial problems.

The information about the demonstrations and uprisings against the presence of Soviet Russian troops in Georgia, which were suppressed only by the use of force, is quite interesting.

The letters again refer to the fate of the imprisoned and exiled ARF members, to taking care of their and their families' needs. A separate report presents the reactivation of party-organizational life.

Резюме

**ПИСЬМА ЦЕНТРАЛЬНОГО КОМИТЕТА АРФ  
ДАШНАКЦУТЮН ГРУЗИИ ОТ 1922 Г.**

Ответственному органу АРФ Дашнакцутюн зарубежом

Хачатур Р. Степанян  
*Доктор ист. наук*

**Ключевые слова** – Грузия, АРФ Дашнакцутюн, Тифлис, Съезд советов, Ответственный орган, переписка, меньшевистская партия, центральный комитет, новая экономическая политика.

В публикуемых документах представлены несколько писем центрального комитета АРФ Дашнакцутюн Грузии Ответственному органу АРФ Дашнакцутюн зарубежом от 1922 г.

В 1922 г. в Советской Грузии (как и во всем советском Закавказье) мотивы и условия подпольной деятельности АРФ Дашнакцутюн не изменились. Перспективы возможного краха Советской власти в Закавказье и установления безвластия вынуждали руководство АРФ Дашнакцутюн сохранять свое организационное присутствие в Советской Армении и в соседних республиках. Вместе с тем, притеснения Советов заставляли действовать партию в подполье, в строго секретных условиях.

Ниже представленные письма содержат интересную информацию не только о деятельности АРФ Дашнакцутюн в 1922 г. в Советской Грузии, но и о политическом и социально-экономическом положении этой республики и всего Закавказья.

Касательно региональных политических проблем, в письмах отмечается определенное ослабление напряжения в российско-турецких отношениях в конце 1921 г..

В письмах большое внимание уделяется процессу осуществления новой экономической политики (НЭП) во всем Закавказье и особенно в Грузии, выявляются ее отрицательные стороны.

В нескольких письмах говорится о визите Дро (Драстамата Канаяна) в Грузию, о запрете его въезда в Армению и о его определенных финансовых трудностях.

Довольно интересна информация о митингах и бунтах против присутствия российских войск, происходящих в Грузии, которые были подавлены силой.

В письмах приводятся сведения о судьбах заключенных и сосланных дашнакцаканов, об их нуждах и нуждах их семей. Отдельной докладной запиской представляется план переактивации партийно-организационной жизни АРФ Дашнакцутюн в Грузии.

ԱՐԴԻԲ

Վէճ համահայկազան հանդես, ԺԳ (ԺԹ) տարի, թիվ 2 (74), ամիս-հունիս, 2021